Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 23.08.2023թ. չորեքշաբթի թիվ 35 (1112)

Օգոստոսյան

Ամառն անցավ: Մի քանի օրից կհնչի դպրոցական *Առաջին զանգը*: **Սեպտեմբերի 1**-ը կտոնենք՝ որպես **Գիտելիքի օր**: Երկրի ղեկավարները կայցելեն կրթօջախներ: *Առաջին դասը* կվարեն ՀՀ ԿԳՄՍ նախարարը, գերատեսչական այլ ղեկավարներ, գրողներ, գիտնականներ, արվեստագետներ... Աշնան առաջին օրը կխորհրդանշի բերքի, գիտելիքի առատություն, կդառնա աշխատանքի, նոր գործերի հրավեր...

Դրանից առաջ արդեն մեկնարկել են *ուսուցիչների օգոստոսյան ավանդական խորհրդակցությունները*: Դրանց, իհարկե, կանդրադառնանք մեր ե՛ւ այս, ե՛ւ առաջիկա համարներում, բայց մինչ այդ երկրի հազարավոր մանկավարժների համախոսքին գումարենք մի պարզ նկատառում:

Ահա արդեն տասնամյակներ խոսում ենք կրթական համակարգի բարեփոխումների մասին: Անշուշտ, նոր հասարակության կառուցման պատմական անհրաժեշտությունն էր, որ թելադրեց ձեռնարկել դրանց իրագործումը: Բոլոնիայի գործընթացին միանալը, բարձրագույն կրթության ոլորտում անցումը եռաստիճան համակարգի, հանրակրթության անցումը տասներկուամյա ուսուցման, ապա կրեդիտային համակարգի, գնահատման եւ քննական նոր համակարգերի ներդրումը եւ այլ նորամուծություններ մեզանում եվրոպական չափորոշիչներ եւ չափանիշներ ամրագրելու, եվրոպական միասնական կրթական տարածք մուտք գործելու նպատակներն են հետապնդում: Իհարկե, ի վերջո, գերխնդիրը մնում է կրթության կազմակերպման առավել կատարյալ ձեւերի եւ եղանակների մշակումն ու կիրառումը եւ դրանցով ուսուցման բարձր **որակ** ապահովելը:

Գերխնդրին հետամուտ՝ աշխարհի փորձն ուսումնասիրելը եւ եղած լավագույնը տեղայնացնելը, թեեւ կարեւոր, բայց չի կարող լինել վերջնական, լիարժեք եւ կամ միակ բավարար ձեռնարկումը: **Սեփական** մանկավարժության պատմությունը, փորձը մանրակրկիտ ուսումնասիրելը, վերլուծելը, նորացնելը, կարծում ենք, նույնքան, գուցեեւ ավելի կարեւոր է. ինչը վերջին ժամանակներում կարծես թե մոռացել ենք: Մի՞թե մեր դարավոր դպրության տարեգրության մեջ մնայուն եւ բոլոր ժամանակների համար ընդօրինակելի էջերը քիչ են: Չէ՞ որ կրթության ոլորտում, ընդհանրապես մանկավարժության բնագավառում կան պատմականորեն հիմնավորված մնայուն սկզբունքներ, որոնց ձեւավորման գործում փոքր չէ հայկական ներդրումը:

Մանրամասնելու խնդիր չդնենք մեր առաջ. ավելացնենք միայն, որ բարդ-բարդ բաներ մտածելուց կամ ուրիշներին պատճենելուց առաջ չմոռանանք, որ այսօր էլ մեզանում կա մասնագիտական հզոր ներուժ, որն ի զորու է ինքը հարստացնել աշխարհի մանկավարժական գանձարանը... Ինչպես դարեր առաջ Անանիա Շիրակացին: Հետո՛ հնչ, որ աշխարհը Կոպեռնիկոսին կամ Բրունոյին է ճանաչում: Մենք հո՛ գիտենք մեր իրական արժեքը: Փորձենք այն մշտապես ճանաչելի եւ գնահատելի դարձնել գոնե մեզ համար: Հետո արդեն՝ նաեւ աշխարհի:

Գ.Մ.



Համահայկական

Ամառային 8-րդ խաղերն ավարտվեցին

Օգոստոսի 19-ին Գառնիում տեղի է ունեցել Համահայկական խաղերի փակման պաշտոնական արարողությունը, որին մասնակցել են ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանը,** Համահայկական ամառային 8-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման կազմկոմիտեի նախագահ **Արայիկ Հարությունյանը,** ՀԽՀԿ նախագահ **Իշխան Զաքարյանը,** ՀԽՀԿ ներկայացուցիչներ եւ խաղերին մասնակցած մարզիկներ, պատվիրակությունների անդամներ:

«Միասնություն սպորտով» կարգախոսի ներքո Համահայկական 8-րդ խաղերը Հայաստանում էին միավորել աշխարհի տարբեր ծայրերից ժամանած մեր հայրենակիցներին: 41 երկրների 181 քաղաքների ավելի քան 7000 մարզիկներ երկու շաբաթների ընթացքում պայքարել են մեդալների 107 հավաքածուի համար: Նրանց 80%-ից ավելին առաջին անգամ էր Հայաստանում:

շարունակությունը՝ էջ 2

Ուժային կառույցներ

Ամրապնդելով պատրաստության ոգին

Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջեւ առաջին անգամ անցկացվող բանակային խաղերի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ **Էդվարդ Ասրյանը,** ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** ուժային գերատեսչությունների ներկայացուցիչներ ու պաշտոնատար այլ անձինք:

Հաջողություն եւ ազնիվ մրցապայքար մաղթելով խաղերի մասնակիցներին՝ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը համոզմունք են հայտնել, որ այս խաղերն առավել կամրապնդեն ուժային կառույցների ներկայացուցիչների մարզական մրցակցության ոգին եւ գործընկերային փոխգործակցությունը, իսկ առաջին անգամ անցկացվող այսօրինակ բանակային մրցաշարը կդառնա ամենամյա եւ ավանդական:

շարունակությունը՝ էջ 2

Սեպտեմբերի 1-ին ընդառաջ

Արտագնա աշխատանքային խորհրդակցություն

Նոր ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ՝ տեղի է ունեցել արտագնա աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են հանրակրթական նոր չափորոշչի ներդրման, նոր դասագրքերի ստեղծման, ուսումնական նյութերի կիրառման, հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխության, դպրոցների ֆինանսավորման եւ կառավարման նոր մոդելի վերաբերյալ մի շարք հարցեր:

Երկօրյա խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը,** նախարարության, ՀՀ մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության ոլորտի պատասխանատուները, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՀՄԿ-ի, Կրթության տեսչական մարմնի ներկայացուցիչներ:

շարունակությունը՝ էջ 4

Ամառային 8-րդ խաղերն ավարտվեցին

սկիզբը՝ էջ 1

Միջոցառման ընթացքում նախագահ Վահագն Խաչատուրյանը մրցանակներ է հանձնել *«Համահայկական խաղերի գեղեցկուհի»*, *«Լավագույն պատվիրակություն»*, *«Արդարացի խաղ»*, *«Համահայկական խաղերի հայտնություն»*, *«Մարզական ոգի եւ արիություն»*, *«Լավագույն քաղաք՝ արտերկրի եւ Հայաստանի Հանրապետության»* անվանակարգերում հաղթողներին:

Համահայկական խաղերի գեղեցկուհի մրցույթում հաղթող է ճանաչվել ԱՄՆ Բեւերլի Հիլզ քաղաքի բասկետբոլիստուհի Աննա Ասլանյանը:

Լավագույն պատվիրակություն է ճանաչվել Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի պատվիրակությունը:

Արդար խաղ անվանակարգում հաղթող է ճանաչվել Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքի պատվիրակությունը:

Համահայկական խաղերի հայտնություն անվանակարգում հաղթել է Ղազախստանի թիմը:

Մարզական ոգի եւ արիություն անվանակարգում հաղթող է ճանաչվել Ստեփանակերտի թիմը:

Լավագույն քաղաք անվանակարգում հաղթել են Լոնդոնն ու Արթիկը:

Միջոցառման ընթացքում Համահայկական խաղերի 25-ամյակի ոսկե մեդալներով եւ 25-ամյակի մեդալներով են պարգեւատրվել մի շարք գործիչներ:

Պարգեւատրման արարողությունից հետո նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդես է եկել ելույթով եւ Համահայկական 8-րդ ամառային խաղերը հայտարարել փակված:

Նախագահն իր խոսքում մասնավորապես ասել է. *«Ավարտին են մոտենում Համահայկական 8-րդ ամառային խաղերը, որոնք արդեն 25 տարի դարձել են կամուրջ աշխարհի տասնյակ երկրներում ապրող մեր հայրենակիցների եւ մայր հայրենիքի միջեւ: Այսօր ես ցանկանում եմ շնորհավորել համահայկական խաղերի բոլոր հաղթողներին ու մրցանակակիրներին, մասնակիցներին եւ մեզ բոլորիս, որովհետեւ ամառային խաղերն իրապես համահայկական միջոցառում է՝ իր բովանդակությամբ ու միասնականության խորհրդով: Այս օրերին աշխարհի ամենահեռավոր անկյուններից Հայաստան եկած մեր բազմահազար հայրենակիցներն իրենց հետ նոր ուժ ու կորով են բերել»:*

Նշենք՝ 8 երկիր առաջին անգամ էր ներկայացուցիչ ունենում խաղերում: Ամենամեծը Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունն էր՝ 24 քաղաքներից՝ 705 մարզիկով: Ամենափոքր պատվիրակությունն ունեցող երկրներն էին Հունաստանը, Սինգապուրը, Հորդանանը եւ Չեխիան՝ 1-ական մասնակից:

Մարզիկները մրցանակային տեղերի համար պայքարել են 19 մարզաձեւում: Մրցումները սպասարկել են շուրջ 500 մրցավարներ՝ այդ թվում աշխարհի 7 երկրներից:

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի պաշտոնական կայքի հաղորդմամբ՝ ամենաշատ մեդալները բաժին են հասել Երեւանի պատվիրակներին: Ընդհանուր առմամբ մեդալներ են նվաճել 15 պետությունների 48 քաղաքներ:

Ինչպես 2019 թվականին, այս անգամ էլ խաղերի կայացմանն իրենց աշխատանքով մեծապես աջակցեցին կամավորները: Շուրջ 2000 կամավորներ հյուրերին օգնում էին օդանավակայանում, սահմանային անցակետերում, մարզադահլիճներում, բացման եւ փակման արարողության ժամանակ՝ ամենուր:

Համահայկական 8-րդ խաղերը մեկնարկել էին օգոստոսի 5-ին, Գյումրիում:

Փակման հանդիսավոր միջոցառման ժամանակ չորս կամավորների օգնությամբ իջեցվել է Համահայկականի դրոշը, մարվել է համահայկական ամառային 8-րդ խաղերի ջահը:

Ամրապնդելով պատրաստության ոգին

սկիզբը՝ էջ 1

Ելույթ ունեցողները նաեւ ընդգծել են, որ մրցույթի մասնակիցները լավագույններից են, քանի որ անցել են նախընտրական դժվարին ճանապարհ, ուստի պատիվ ունեն ներկայացնելու իրենց ուժային կառույցները՝ առավելագույնս ցուցադրելով իրենց կամային որակները, արհեստավարժությունն ու մարզական հմտությունները:

Բանակային խաղերին մասնակցում են ՀՀ պաշտպանության, ներքին գործերի, արդարադատության նախարարությունների, ազգային անվտանգության ծառայության, պետական եկամուտների եւ քննչական կոմիտեների, դատախազության եւ պետական պահպանության ծառայության հավաքական թիմերը, որոնք շուրջ մեկ շաբաթ կպայքարեն մի քանի մրցաձեւերում:

Բանակային խաղերի բացման արարողությունը եզրափակվել է հավաքական թիմերի հանդիսավոր երթով եւ ՀՀ ԶՈՒ երգի եւ պարի համույթի ելույթով:

Հիշեցնենք՝ բանակային խաղերում ներառված են լինելու հետեւյալ մարզաձեւերը՝

- բանակային քառամարտ, որն ընդգրկում է ծգումներ պտտաձողից (կանանց դեպքում՝ իրանի ծալում եւ տարածում), վազք՝ 100 մ եւ 3000 մ (կանանց համար՝ 1000 մ) եւ նռնակի նետում նշանակետին մրցաձեւերը,

- ռազմականացված կրոսավազք (փոխանցումավազք), որը կիրականացվի թե՛ անհատական, թե՛ թիմային ձեւերով. այս պարագայում՝ արդեն փոխանցումավազքով, ամեն կառույցից՝ 3-ական մասնակից: Մարզաձեւի էությունը վազքն է, այնուհետեւ թիրախի խոցումն ավտոմատով, նորից վազք, ապա նռնակի նետում վարժությունների կատարումը,

- կողմնորոշում, որն իրականացվելու է որոշակի տեղանքի համար տրվող քարտեզով, տեղանքում առանձնացվելու են ստուգողական կետեր, քարտեզով տրվելու են նաեւ դրանք գտնելու հերթականությունը, եւ էլեկտրոնային կրիչով գրանցվելու է յուրաքանչյուր կետին մոտենալու հանգամանքը: Մասնակիցները, ինչը կարեւոր է, կարող են օգտագործել միայն ոչ էլեկտրոնային կողմնացույց,

- 3 տարբեր հրաձգության ձեւեր են տարբեր դիրքերով՝ հրաձգություն «ԱԿ 74» ինքնաձիգից,հրաձգություն «ՊՄ» ատրճանակից, հրաձգություն «ԴԴՀ» հրացանից: Հրաձգությունը պետք է կազմակերպվի՝ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված՝ հրաձգության ձեռնարկի համաձայն:

Բանակային խաղերի մրցանակային ֆոնդը 30 միլիոն դրամ է կազմում: Առաջին, երկրորդ, երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգեւատրվեն հավաստագրերով, մեդալներով եւ դրամական պարգեւներով, առաջին տեղը գրաված թիմերը՝ գավաթներով: Առաջին տեղի համար նախատեսված է 1 մլն դրամ պարգեւ, 2-րդ տեղի համար՝ 500 հազար դրամ, 3-րդ տեղի համար՝ 300 հազար դրամ:

Փոխանցումավազքի մրցանակակիր թիմերը կպարգեւատրվեն համապատասխան գավաթով, իսկ յուրաքանչյուր մասնակից՝ մեդալներով, պատվոգրերով եւ դրամական պարգեւներով: 1-ին տեղի համար յուրաքանչյուր մասնակից կստանա 300 հազար դրամ, 2-րդ տեղի համար՝ 200 հազար դրամ, 3-րդ տեղի համար՝ 150 հազար դրամ:

Այց Սյունիքի մարզ

Արդյունավետ կանգառներ

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** աշխատանքային այց է կատարել Սյունիքի մարզ: Նա շրջել է մի շարք կրթական, մշակութային եւ սպորտային հաստատություններում, ծանոթացել կատարվող աշխատանքներին եւ առկա խնդիրներին:

Նախարարի առաջին կանգառը Մեղրիի պետական քոլեջն էր: Ժաննա Անդրեասյանը շրջել է քոլեջի տարածքում, ծանոթացել շենքային պայմաններին, խնդիրներին: Նախարարը հետաքրքրվել է ընդունելության գործընթացով, ինչպես նաեւ նոր ուսումնական տարվան ընդառաջ քոլեջի տնօրենի եւ կրթության ոլորտի պատասխանատուների հետ քննարկել է ուսումնական պլանները, ներկայացրել ոլորտում իրականացվող բարեփոխումները:

ԿԳՄՍ նախարարի հաջորդ կանգառը Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրիի մասնաճյուղն էր: Նա շրջել է կենտրոնում, ծանոթացել ընդհանուր ցուցադրությանը՝ հատկապես հետաքրքրվելով սաների ձեռագործ աշխատանքներով: Նախարարը տեղում արձանագրել է մի քանի խնդիրներ, որոնց կարգավորման ուղղությամբ կտրվեն լուծումներ:

Մեղրիում Ժաննա Անդրեասյանն այցելել է նաեւ Սուրբ Հովհաննես եկեղեցի, որտեղ արդեն ավարտվել են վերականգնման աշխատանքները:

Սյունիք կատարած մարզային այցի շրջանակում նախարարն եղել է նաեւ Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարանում եւ Քաջարանի մանկապատանեկան մարզադպրոցում, ծանոթացել շենքային, մարզումային պայմաններին եւ առկա մի շարք խնդիրների:

Դպրոցի տնօրենն ու մարզիչները հպարտությամբ ներկայացել են իրենց սաների մարզական հաջողությունները: Քննարկվել է մարզադպրոցի շենքային պայմանների եւ գույքային հագեցվածության բարելավմանն ուղղված մի շարք հարցեր:

Նշենք, որ նախարար Ժաննա Անդրեասյանի մարզային այցերը շարունակական են լինելու:

Օգոստոսյան խորհրդակցություններ

ԲՏՃՄ առարկաների բոլոր ուսուցիչները կստանան 25 տոկոս հավելավճար

Նոր ուսումնական տարվան ընդառաջ Արագածոտնի մարզից մեկնարկել են ավանդական օգոստոսյան խորհրդակցությունները՝ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների մասնակցությամբ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների, նոր ուսումնական տարվանից կիրառվելիք նորարարական մոտեցումների վերաբերյալ խորհրդակցությանը վարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը:** Խորհրդակցությանը մասնակցել են նախարարության եւ մարզպետարանի հանրակրթության ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձինք, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ մարզի 118 դպրոցների տնօրենները:

Նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ողջունելով ներկաներին, նախ ամփոփ տվյալներ է ներկայացրել Արագածոտնի մարզից ՀՀ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցած դիմորդների արձանագրած ցուցանիշների մասին՝ հղում կատարելով ԳԹԿ ներկայացրած տվյալներին:

Հաջորդիվ նախարարի տեղակալն անդրադարձել է պետական նոր չափորոշչի ներդրման, հանրակրթության կազմակերպման գործընթացի լավարկմանը, կրթական միջավայրի արդիականացմանը, ուսուցչի դերի վերաիմաստավորմանը, նրա աշխատանքի խրախուսմանը, կարողունակությունների զարգացմանը, կրթության ներառականության ընդլայնմանն ու ընդհանուր առմամբ, կրթության որակի բարձրացմանն ուղղված բաղադրիչներին, որոնք արդեն իսկ կգործարկվեն 2023-2024 ուսումնական տարվանից:

Նշվել է, որ սեպտեմբերից նոր չափորոշիչը ներդրվելու է 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում, իսկ 10-րդ դասարանում այն կգործի հաջորդ ուսումնական տարվանից: Սեպտեմբերից մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների ուսուցիչները, ինչպես նաեւ Հայաստանում ԲՏՃՄ առարկաների՝ բացառությամբ մաթեմատիկական առարկաներ դասավանդողների, բոլոր ուսուցիչները կստանան 25 % հավելավճար: Ի հավելումն նախարարի տեղակալի պարզաբանումների՝ ԿԳՄՍՆ ներկայացուցիչները խոսել են աշակերտների կրթական իրավունքի իրացումն արդյունավետ կազմակերպելու կարեւորության մասին՝ շեշտադրելով թե՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լավագույն պայմանների ապահովման, եւ թե բուլինգի, ընտանիքում երեխայի բռնության եւ այլ արատավոր երեւույթների վերահսկման եւ կանխարգելման բացառման կարեւորությունը: Հնչած հարցերի շուրջ տնօրենները հարցադրումներ են ներկայացրել, որոնց վերաբերյալ ծավալվել է քննարկում:

Արագածոտնի մարզպետի խորհրդական **Արմեն Գրիգորյանը** եւս ողջունել է ներկաներին եւ տեղեկացրել, որ մինչեւ 2024 թվականը Արագածոտնի գրեթե բոլոր դպրոցները կունենան ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, այդ թվում՝ 13-ը կգործարկվեն այս ուսումնական տարվա սկզբին: Նա անդրադարձել է նաեւ ՀՀ Կառավարության 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրին՝ նշելով, որ Արագածոտնի մարզում 1-ին փուլով 22 դպրոց է կառուցվելու կամ վերակառուցվելու: Օհանավանի, Լուսակնի եւ Գառնահովիտի դպրոցների շինաշխատանքներն արդեն ավարտական փուլում են: Սասունիկի եւ Արագածավանի թիվ 1 դպրոցների կառուցման աշխատանքներն մեկնարկել են, ուստի նոր ուսումնական տարվանից այս դպրոցների աշակերտների ուսումնական գործընթացը՝ մինչեւ դպրոցների կառուցման ավարտը, կկազմակերպվի մոտակա այլ դպրոցներում:

Արագածոտնի մարզ կատարած աշխատանքային այցի շրջանակում ԿԳՄՍ ներկայացուցիչները հանդիպել են նաեւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարների հետ՝ նրանց իրազեկելով նախադպրոցական կրթությանն առնչվող նորամուծությունների մասին: Ընդգծվել է, որ նախադպրոցական կրթությունը որպես կրթության առաջնային օղակ ոչ պակաս կարեւորվում է ՀՀ Կառավարության կողմից, ուստի մեկնարկած մեծածավալ բարեփոխումների թիրախը նաեւ այս ոլորտի զարգացումն է: 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրով մարզերում շուտով կիիմնվեն նոր մանկապարտեզներ, կվերակառուցվեն գործողները, բացի շենքային արդի պայմաններ ապահովելուց, ընթացքի մեջ են նաեւ բովանդակային փոփոխություններ, որոնք նախատեսում են նախակրթարանների եւ մանկապարտեզների մանկավարժական կազմի կարողությունների զարգացում եւ ֆինանսական նոր մոդելի կիրառում:

Հիշեցնենք՝ խորհրդակցությունների նպատակն է՝ նոր ուսումնական տարվան ընդառաջ ոլորտի խնդիրները քննարկել տեղերում՝ տնօրենների, հանրակրթության մարզային պատասխանատուների հետ:

Շնորհավորում ենք

Նոր նշանակում

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ **Սարգիս Հայոցյանը** նշանակվել է ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ՝ ազատվելով Գիտության կոմիտեի նախագահի պաշտոնից:

Հիշեցնենք, որ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն ստեղծվել է՝ *«Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին»* օրենքում 2023 թվականին կատարված լրացումների եւ փոփոխությունների համաձայն: Նորաստեղծ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն կազմավորվել է Բարձրագույն որակավորման կոմիտեի, Գիտության կոմիտեի եւ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության հիմքի վրա:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն գործում է ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ՝ իրականացնելով բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտի միասնական քաղաքականությունը: Մարմնի գործունեության ոլորտին է վերապահված գիտության եւ բարձրագույն կրթության համագործակցությանն ու ինտեգրմանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը:

Նշենք, որ արդեն ուժի մեջ է մտել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի կանոնադրությունը:

Բարի լուր

Հերթական մեդալները

Լեհաստանի Սիլեսիա քաղաքում օգոստոսի 10-20-ն անցկացվել է Աստղագիտության եւ աստղաֆիզիկայի միջազգային 16-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 50 երկրի 241 աշակերտ:

Օլիմպիադային Հայաստանի թիմը ներկայացրել են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներ **Արեգ Բարսեղյանը, Վյաչեսլավ Պետրոսյանը, Արտավազդ Հարությունյանը** եւ **Մարիա Առաքելյանը:** ՀՀ թիմից արծաթե մեդալի է արժանացել Վյաչեսլավ Պետրոսյանը, իսկ բրոնզե մեդալի՝ Արտավազդ Հարությունյանը: Արեգ Բարսեղյանը եւ Մարիա Առաքելյանն արժանացել են գովասանագրերի:

Օլիմպիադան անցկացվել է 4 փուլով՝ տեսական, դիտողական, տվյալների վերլուծության եւ պլանետարիումի:

Հայաստանի թիմը ղեկավարել է Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի ուսուցիչ **Վարդգես Մամբրեյանը:**

Հիշեցնենք, որ 2022 թ. Հայաստանի թիմն Աստղագիտության եւ աստղաֆիզիկայի միջազգային 15-րդ օլիմպիադայում արժանացել էր 3 բրոնզե մեդալների:

«Ամառային դպրոց»

Նախարարը հանդիպել է ծրագրի մասնակիցներին

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** Ազգային ժողովում հանդիպել է *«Ամառային դպրոց»* ծրագրի մասնակիցների հետ:

Հանդիպմանը մասնակցել են ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Սիսակ Գաբրիելյանը** եւ հանձնաժողովի անդամ **Հասմիկ Հակոբյանը:**

Ծրագրին մասնակցում է շուրջ 600 դիմորդից մրցութային փուլը հաղթահարած՝ ՀՀ դպրոցների ավագ դասարանների 60 աշակերտ:

Աշակերտների հետ հանդիպման ընթացքում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ընդլայնմանը, ավագ դպրոցներում ուսումնական ծրագրերի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերին, մարզերում որոշ առարկաների գծով ուսուցիչների համալրման գործընթացին:

Նախարարը կարեւորել է նախարարության կողմից կրթությունը խրախուսող հոլովակների եւ քարոզչական այլ նյութերի պատրաստումն ու ցուցադրումը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա երիտասարդների շրջանում կրթության արժեւորման եւ տարածման գործում:

Նա խոսել է նաեւ ավագ դպրոցներում ուսուցման նոր մեթոդների, մասնավորապես՝ անհատականացված ուսուցման կիրառման մասին:

Նախարարը պատասխանել է աշակերտների՝ ոլորտին առնչվող բազմաթիվ հարցերին:

Ժաննա Անդրեասյանը, կարեւորելով նախարարին կից գործող աշակերտական խորհրդի դերը, նշել է. *«Ի դեմս աշակերտների՝ կրթական համակարգում մենք ունենք ներուժ, որն արդյունավետ չենք օգտագործում: Մենք հակված ենք աշակերտներին վերաբերվել որպես կրթական համակարգի հիմնական շահառու, բայց դուք դրա լիարժեք մասնակիցն եք: Իրականում կրթությունը ձեր օգնությամբ կարող է դառնալ շատ ավելի լավը: Կարծում եմ՝ փոփոխությունների մեջ դուք ամենալավն եք տեսնում այն խնդիրներն ու բացերը, որոնք կարելի է լավարկել ու վերանայել»:*

Օգոստոսի 21-ին *«Ամառային դպրոց»* ծրագրի առաջին դասընթացն էր: Ծրագիրը կտեւի 2 շաբաթ:

Արտագնա աշխատանքային խորհրդակցություն

սկիզբը՝ էջ 1

Ներկայացնելով հանրակրթության նոր չափորոշչի ներդրման ուղղությամբ ընթացող աշխատանքները՝ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ սեպտեմբերից նոր չափորոշիչը ներդրվելու է 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում: 10-րդ դասարանում նոր չափորոշչի ներդրումը կիրականացվի հաջորդ ուսումնական տարում՝ թեեւ նախապես պլանավորված էր, որ ներդրվելու է այս տարվանից:

Ըստ փոխնախարարի՝ հանրակրթության պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ հայտարարվել էին դասագրքերի ստեղծման մրցույթներ, որոնք արդեն ամփոփվել են: Մասնավորապես՝ 10-րդ դասարանի համար անհրաժեշտ դասագրքերից մոտ տասը բացակայում են, քանի որ դրանց մի մասի համար հայտեր չեն ներկայացվել, իսկ որոշ դեպքերում ներկայացված հայտերը փորձագիտական դրական եզարակացություն չստանալու պատճառով չեն երաշխավորվել:

Ինչ վերաբերում է մյուս դասարաններին (2-րդ, 5-րդ, 7-րդ), ապա դրանց համար դասագրքերի հիմնական մասն արդեն երաշխավորվել է:

«Ինչպես գիտեք, դասագրքերի ստեղծման եւ հրատարակման գործընթացներն առանձնացված են, եւ բոլոր այն դասագրքերը, որոնց մրցույթներն արդեն կայացել են, ներկայացվել են հրատարակման: Այն առարկաները, որոնց համար նոր դասագրքեր դեռեւս չկան, կդասավանդվեն ուսումնական նյութերով»,- պարզաբանել է Արաքսիա Սվաջյանը՝ հավելելով, որ նախորդ երկու-երեք տարիներին, երբ Տավուշում փորձարկվում էր նոր չափորոշիչը, ուսումնական նյութերն արդեն մշակվել էին:

Նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ, սակայն այս ուղղությամբ դեռեւս կա հավելյալ աշխատանքի անհրաժեշտություն: Այդ նպատակով առանձնացվել են մենթոր դպրոցներ, որոնք հանդես են գալու որպես աջակցություն ցուցաբերող կենտրոններ:

«Առնավազն առաջիկա մի քանի տարում մենք չափորոշչի ներդրման գործընթացում ենք գտնվելու: Հաջորդ տարի հանրակրթության պետական չափորոշիչը կներդրվի 3-րդ, 6-րդ, 8-րդ եւ 10-րդ դասարաններում, իսկ հաջորդաբար արդեն մնացած դասարաններում: Հաշվի առնելով Տավուշի մարզում չափորոշչի ներդրման փորձը՝ ակնկալում ենք ունենալ դրական արդյունք, որի համար պատասխանատու եւ հետեւողական աշխատանք պետք է կատարենք: Հատկապես փորձարկվող դասարանները պետք է լինեն մեր ուշադրության կենտրոնում գ ուսուցիչը եւ աշակերտը պետք է անընդհատ զգան, որ պետության ուշադրության կենտրոնում են»,- նշել է նախարարի տեղակալը:

Նշվել է, որ չափորոշչի ներդրմանը զուգահեռ՝ փոփոխություններ կլինեն դասարանների կոմպլեկտավորման, ուսուցիչների դրույքային ծանրաբեռնվածության, սովորողների գնահատման համակարգերում: Այդ փոփոխությունները կիրառելի են միայն 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների սովորողների եւ ուսուցիչների համար, որտեղ ներդրվում է նոր չափորոշիչը: Մասնավորապես՝ 2-րդ դասարանում ուսուցչի դրույքային ծանրաբեռնվածությունը կհաշվարկվի շաբաթական 18, իսկ 5-րդ եւ 7-րդ դասարաններում՝ 20 ժամ ծանրաբեռնվածությամբ: Մյուս դասարաններում կշարունակի գործել շաբաթական 22 ժամ ծանրաբեռնվածության մոդելը, որը կփոփոխվի առաջիկա տարիներին՝ չափորոշչի ներդրմանը զուգահեռ:

Արդեն հաստատվել են համապատասխան կարգերը, ըստ որի՝ մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների մանկավարժները, ինչպես նաեւ հանրապետության բոլոր ԲՏՃՄ առարկաների ուսուցիչները՝ բացառությամբ մաթեմատիկական առարկաներ դասավանդողների, կստանան հավելավճար: Պարզաբանելով խնդիրը՝ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ դպրոցները պետք է ուսուցիչների տվյալները ներբեռնեն ԿՏԱԿ-ի կողմից սպասարկվող կրթության կառավարման տեղեկատվական համակարգ: Ներկաները հարց են բարձրացրել՝ ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների համար սահմանված 25 տոկոս հավելավճարը արդյոք տարածվու՝մ է համատեղությամբ աշխատող մանկավարժների վրա: Այս առնչությամբ պարզաբանվել է, որ համատեղությամբ աշխատելու դեպքում եւս հավելավճարը կիրառելի է:

ԿՁՆԱԿ տնօրենի պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը** ներկայացրել է հանրակրթության նոր չափորոշչի տեղայնացման նպատակով մշակված բովանդակային նյութերն ու գործիքները, որոնք պետք է կիրառվեն դպրոցների կողմից չափորոշչի տեղայնացման ընթացքում:

Հանրակրթության վարչության քաղաքականության մշակման եւ վերլուծության բաժնի պետ **Անուշ Լալազարյանը** ներկայացրել է իրավական ակտերում կատարված փոփոխությունները:

ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ **Վահրամ Գասպարյանը** ներկայացրել է ֆինանսավորման նոր մոդելի ներդրմանն առնչվող պարզաբանումներ:

Այս համատեքստում քննարկվել են համընդհանուր ներառական կրթության կազմակերպմանն առնչվող խնդիրները. նշվել է, որ առաջիկա սեպտեմբերից ներդրվող ֆինանսավորման նոր մոդելով բոլոր դպրոցներում պարտադիր է լինելու հոգեբանի հաստիքը:

Խորհրդակցության ընթացքում անդրադարձ է եղել նաեւ տնօրենի ընտրության կարգում նախատեսվող փոփոխություններին, որի նախագիծն այժմ շրջանառվում է:

ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության հանրակրթության եւ արտադպրոցական ծրագրերի մշակման եւ իրականացման բաժնի պետ **Սուսաննա Ազատյանը** ներկայացրել է ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը վերաբերող՝ խորհրդակցության օրակարգային մյուս հարցերը, այդ թվում՝ ատեստավորման եւ որակավորման տարակարգի, նախադպրոցական կրթության ոլորտի փոփոխությունների մասին եւ այլն:

Ճանաչի՛ր, որ սիրես

Արցախի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

Մեծ Հայքի Արցախ նահանգն ընդգրկել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարեւելյան եզերքը՝ Փոքր Կովկասի հարավարեւելյան հատվածը: Հայոց Արցախ աշխարհը հարուստ է բնության ու պատմամշակութային հոյակերտ հուշարձաններով:

Համահայկական ճանաչում եւ հռչակ են վայելում Ազոխի քարանձավը, Հյունուտի կիրճը, Քարվաճառի ջերմուկներն ու Սխտորաշեն գյուղի մոտակայքում վեր խոյացած հսկայական սոսին (չինարի, արցախյան բարբառով՝ տընջըրե): Այն մոտ 2000 տարեկան է: Ծառի բարձրությունը ավելի քան 54 մ է: Փչակն ունի 44 քառ. մ մակերես: Ծառի ներսում կարող են հանգիստ տեղավորվել ավելի քան հարյուր հոգի: Ծառաբնի հիմքի տրամագիծը 27 մ է: Հսկայական սոսին ստվեր է գցում մոտ 1400 քառ. մ մակերեսի վրա: Իր հսկայական չափերով ծառը գերազանցում է հանրահայտ էգեյան ծովի Կոս կղզու եւ Աշքաբադի Փիրուզե կիրճի ծառերին: Ծառի մոտ բխում է ջրառատ Տենջրու աղբյուրը, որը դարեր ի վեր ջրում էր սոսին եւ աշխատեցնում մոտակա ջրաղացները: Համաձայն արձանագրության՝ աղբյուրը կառուցել են Սխտորաշենի բնակիչները՝ Հովհաննես Կասիբեկյանը, Ներսես Մուսաելյանը, Մանաս Գասպարյանը:

Ըստ սերնդե սերունդ փոխանցվող ավանդությունների՝ այդ դարավոր ծառի ստվերում հանգստացել են անցյալի այնպիսի երեւելի գործիչներ, ինչպիսիք են Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, Սուրբ Մովսես Խորենացին, Մովսես Դասխուրանցին (Կաղանկատվացի), Սայաթ-Նովան, Ռաֆֆին, Լեոն եւ շատ ուրիշներ:



Սխտորաշեն գյուղի մոտակայքում վեր խոյացած հսկայական սոսին (չինարի, արցախյան բարբառով՝ տընջըրե)

Ամարասի վանք

Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղը գտնվում է Ամարաս գետի աջ ափին՝ լեռների գրկում, Ստեփանակերտ քաղաքից մոտ 55 կմ հարավ-արեւելք, Երեւանից մոտ 375 կմ (դեպի հարավ-արեւելք) հեռավորության վրա: Մաճկալաշեն գյուղի մոտ՝ Խազազ եւ Լուսավորիչ սարերի միջեւ ընկած գոգահովտում, գտնվում է նշանավոր Ամարասի վանքը: Ամարասի վանքի եկեղեցին IV դ. սկզբին հիմ-նադրել է Ս. Գրիգոր Լուսավորիչը: Եկեղեցու արեւելյան կողմում է ամփոփված Աղվանքում քրիստոնեություն տարածելիս 338 թ. Սանեսան թագավորի հրամանով նահատակված Ս. Գրիգորիսը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի թոռը: V դ. սկզբին Ս. Մեսրոպ Մաշտոցը Ամարասի վանքում բացել է Արցախ աշխարհի առաջին հայագիր դպրոցը: 489 թ. Վաչագան Գ. Բարեպաշտ թագավորը, գտնելով Գրիգորիսի՝ արդեն մոռացված գերեզմանի տեղը, վրան մատուռ է կառուցում, ապա նաեւ եկեղեցի: V դարից Ամարասի վանքը դարձել է երկրամասի նշանավոր կենտրոն եւ եպիսկոպոսանիստ:

XX դ. լքված եւ ամայացած Ամարասի վանքը 1992 թ. վերաբացվել է որպես Արցախի թեմի գործող վանք:

Ամարասի վանքն ունի կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ (59 x 85 մ)՝ չորս անկյուններում շրջանաձեւ բուրգերով ուժեղացված եւ հրակնատավոր բարձր պարիսպներ, որոնց ներսից ամբողջ պարագծով կից են բնակելի եւ օժանդակ շինությունները: Բնակելի խցերի շարքով անցատվող երկու ներքին բակերից արեւելյանը տնտեսական նշանակության է (նրա շուրջն են խմբավորված վանքի գոմը, ախոռը, մթերանոցները): Արեւմտյան՝ ավելի ընդարձակ բակի կենտրոնում բարձրանում է երկու զույգ մույթերով Ս. Գրիգորիս եռանավ բազիլիկ եկեղեցին: Եկեղեցու բեմի տակ պահպանվել է Ս. Գրիգորիսի մատուռ-դամբարանը՝ արեւելքից արեւմուտք ձգվող ուղղանկյուն (1,90 x 3,75 մ), պայտաձեւ կտրվածք ունեցող թաղով միանավ դահլիճը, որն արեւելքում ունի խորշ, իսկ երկայնական պատերում՝ մեկական մուտք: Նախամուտքերի արեւելյան պատերին քանդակված են ոճավորված արմավենիներ: Ս. Գրիգորիսի դամբարանն ունի նույն հորինվածքը, ինչպիսին ունեն Ս. Էջմիածնում Ս. Գայանեի եւ Օշականում Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանները, եւ կարեւոր է Հայաստանում հուշակոթողային ճարտարապետության՝ այդ կառուցվածքների ստեղծման եւ զարգացման պատմության ուսումնասիրման համար:

«Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ, Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար, հնագետ Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ՝ 2014 թ., ապա 2019-ին պեղման եւ ուսումնասիրման աշխատանքներ են իրականացվել Ամարասի Սուրբ Գրիգորիս մատուռ-դամբարանում:

Ամարասի պեղումների ընթացքում տարբեր ժամանակաշրջանների նյութ է հայտնաբերվել, որոնցից Հ. Պետրոսյանը, մասնավորապես, առանձնացնում է մարդու կմախքի մնացորդները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում՝ Ս. Գրիգորիսի մասին շրջանառվող ավանդազրույցների համայնապատկերում: Թե հայտնաբերված ոսկորները որքանով կարող են առնչվել V դարի իրողություններին, կպարզվի ուսումնասիրությունների արդյունքում:

Ավանդապատում

Ավանդությունը հայտնում է, որ արնածարավ Լենկ Թեմուրը, ասպատակելով բազում երկրներ, եկել հասել էր Պարսկաստան, հյուսիսից անցել Արաքս գետը եւ խորացել մեր հայրենիքի սահմաններում, հասել Արցախ ու Ամարաս: Բռնակալը հրամայել է հիմնահատակ ավերել վանքը, իսկ քարերը նետել վանքից ահագին հեռավորությամբ հոսող Արաքս գետը: Լենկ Թեմուրն իր զինվորներին հրահանգում է կենդանի շղթա կազմել ու քարերն իրար փոխանցելով՝ լցնել Արաքս գետը: Զինվորները նույնությամբ կատարել են բռնակալի հրամանը եւ վանքի քարերը ձեռքից ձեռք փոխանցելով՝ լցրել են Արաքս գետը: Սակայն գիշերը, Աստծո հրամանով, հրեշտակների երկնային զորքը կրկին կառուցել, վերականգնել է Ամարասի վանքը: Ապշահար բռնակալը հրամայել է նորից հիմնիվեր քանդել վանքը եւ քարերը լցնել գետը: Այդպես կրկնվել է մի քանի անգամ: Ցերեկները զինվորները քանդում էին սրբավայրը, իսկ գիշերները հրեշտակների բազմությունը մի քանի րոպեում վերականգնում էր հրաշակերտ վանքը: Չկարողանալով հասնել իր մտադրության իրականացմանը՝ սարսափահար Լենկ Թեմուրը ստիպված է լինում անխաթար թողնել հրաշագործ սրբավայրը եւ գլխիկոր հեռանալ երկրամասից:

շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ





Սուրբ Գրիգորիսի տապանաքարը Ամարասի եկեղեցու խորանի տակ



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Վահան Թեքեյանի անվան հ. 92 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի, քիմիայի, կենսաբանության, ինֆորմատիկայի, ռուսաց լեզվի, ֆիզկուլտուրայի, տեխնոլոգիայի ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 7-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի Վահան Թեքեյանի անվան հ. 92 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Սեբաստիա 54:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 74-71-75 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի *«Հացավանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (11 դասաժամ), ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ), մաթեմատիկայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Հացավանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 00-66-72 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Եղիշե Չարենցի անվան հ. 67 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (12 դասաժամ), անգլերենի (18 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի Եղիշե Չարենցի անվան հ. 67 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ամիրյան 9:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 53-87-80 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի երաժշտության (14 դասաժամ), ինֆորմատիկայի (13 դասաժամ), տեխնոլոգիայի (5 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 10-09-58 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Արա Հարությունյանի անվան հ. 49 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի անգլերենի (14 դասաժամ), աշխարհագրության (7 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ սեպտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 6-ին՝ ժամը 14:30-ին,*** Երեւանի Արա Հարությունյանի անվան հ. 49 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր-Արեշ 5 փ., 2/3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 45-02-00 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի հ.185 դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (26 դասաժամ), հայոց լեզվի եւ գարկանության (5 դասաժամ), մայրենիի (24 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), պատմության (16 դասաժամ), ֆիզիկայի (12 դասաժամ), տեխնոլոգիայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 24-ից մինչեւ սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի հ.185 դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Հ.Բեկնազարյան 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 35-80-07 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Ղուկասավանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի աշխարհագրության (10 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 6-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ղուկասավան, Արամի փ. 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 05-04-61 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Ս. Կապուտիկյանի անվան հ.145 դպրոց»* ՊՈԱԿ-ի պատմության (13,5 դասաժամ), հայոց լեզվի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ին,*** Երեւանի Ս. Կապուտիկյանի անվան հ.145 դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Հ. Էմինի փ. , շ. 8:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 26-24-22, (077) 49-29-95 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ.168 դպրոց»* ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (20 դասաժամ), երաժշտության (12 դասաժամ), անգլերենի (12 դասաժամ), պատմության (27 դասաժամ), տեխնոլոգիայի (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 23-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 12-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ.168 դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Բաշինջաղյան 1-ին նրբանցք:

